ԽԱՉԼՈՒԱՅ ՔԱՒՇԱՆԻ ՄԷՋ ՔՐԴ. ԳԻՒՂԵՐ

1. ԱԶՐԱՑԷԼ

Աղրայէլ գիւղ մի է քրդական, որ կը նշանակէ հոգէառ, կայ յարեւմուտս Կալոյի Ջրին և հանդէպ Տէտէ Մուրատ քարալերան և երկու ժամ ի հիւսիս արեւելս Խաչլուայ, ի Կաղզուան գնալիք ուղղոյն աջ կողմն՝ ճանապարհից 10 վայրկեան խոնարհ ընդարձակ մի մարգագետնոյ միջավայրն գրաւած է և կայ Բօղ-Թեփէ լերան հարաւային կողերէն միոյն վերայ. որպէս և ամբողջ Խաչլուայ քաւշանը և որոյ մէջ գտնուած տասը քրդ. գիւղօրայք։

Այս Ձիլանցի ցեղին յատուկ 10 տուն քրդեր հիանալի տեսարան ունին. ի հարաւ կը տեսնուի Կալոյի Ջրի ընթացքը, յարեւմուտս Խաչլուայ քաւշանի արեւելեան մասն, որ հակեալ է ի հարաւ արեւելս, նաև Ամատայ քաւշանի արեւմտեան մասն։

Գիւղի շուրջն պատած են սառն և համեղ աղբերակունք, ընտիր մարգագետիններ, գիւղի մօտ կայ նաև ընդարձակ և պատուական գաճի հանք [1]։

Այս քրդեր նախ մի գիւղի տեղ գրաւեցին, ապա իւրեանց սահմանը ընդարձակեցին, գրաւելով Հայոց պատկանող մարգագետիններն, որովհետև հայ գիւղացիք չէին կարող այդ չափ հեռուն ձգտել իւրեանց կալուածներուն ուշադրութիւն դարձնել, մանաւանդ որ երկրագործական ծանր գրաղման մէջ ընկղմած լինելով՝ կարեւորութիւն անդամ չեն տուած այն վայրերուն, որ այնչափ արժողութիւն չունին իւրեանց համար։

---

1. Այս գաճի քարերից Ալաշկերտ բերել տուած եւ փորձեր արած եմ; գտած եմ շատ լաւ։